

Այսպիսի պժգալի ախտով մեռաւ Ղոն Ալլզ 1789ին, մահուանը վրայ ցաւող մը չունեցաւ, բայց շատ ուրախալ ցան իր ժառանգները :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՕԳԵՐԵՒՈՒԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա . Բարեխառնութիւն :

Եղանակ : — Ըստեղբայրական եղանակները արևուն ընթացքովը կը կանոնաւորուին, իսկ օդերևութաբանութեան մէջ կը նային բնագնիք բարեխառնութեան ընթացքովը կանոնաւորել : Չմեռ ամենէն իրիստ եղանակն ըլլալով՝ այնպէս պէտք է կարգաւորել որ տարւոյն ամենէն ցուրտ օրը այս եղանակին ըստ կարի մէջ տեղն իյնայ : Ըստ միջոցս գրեթէ յունուարի 15էրորդ օրը կ'իյնայ, որով ձմեռը դեկտեմբեր, յունուար, փետրուար ամիսներէն կը կազմուի . գարունը՝ մարտ, ապրիլ, մայիս . և այսպէս հետզհետէ : ()դերևութաբաններէն քիչ հոգի աստեղաբաշխական բաժանումը կը գործածեն, որ ձմեռը դեկտեմբերի 21էն կը սկսի : Ամենք ալ կան որ երկրիս մասնաւոր կէտերու համար արուեստական եղանակներ կը հնարեն . ինչպէս օրինակի համար ձմեռը ան ատեն կը սկսին երբոր ջերմաչափը առաջին անգամ զրոյ աստիճանը ցուցնէ, իսկ գարունը՝ երբոր առաջին տերևները կը սկսին երևալ : Բայց այսպիսի բաժանմունք մը գիտութեան մէջ խառնակութիւն կը ձգէ, վասն զի այն ատեն երկրիս երեսը եղանակաց անթիւ բաժանմունքներ կ'ըլլային :

Ըբեցութիւն լայնութեան 'ի վերայ բարեխառնութեան : — ()է որ լայնութեամբ իրարմէ հեռու եղած երկիրները մէկմէկու հետ բազմատեղու ըլլանք՝ կը տեսնենք որ անոնց միջին բարեխառնութիւն

ները այնչափ վար են որչափ որ հասարակածէն հեռու են, և հետևաբար որչափ որ արևուն միջին բարձրութիւնը իրենց հորիզոնին վրայ քիչ է : Աւտի մինչդեռ հասարակածին վրայ միջին բարեխառնութիւնը 27° և 28° աստիճաններուն մէջ կը տարբերի, ()էնէրիֆֆա՝ 21°, 7 է, Փարիզ՝ 10°, 8 է, և Նիսի սային ()լիսոյն վրայ՝ 0° է : Հովերուն ուղղութիւնն ալ, խոնաւութեան քանակութիւնն ալ, ևն, քիչ ազդեցութիւն չունին միջին բարեխառնութեան վրայ, որ հաւասար լայնութեան տակ՝ ծովեզերեայ տեղուանք և կղզիներու մէջ աւելի բարձր է քան թէ մեծամեծ ցամաքներուն ներսերը :

Միևուրբին վերնագոյն խառնութեան բարեխառնութիւնը : — Տեղոյ մը միջին բարեխառնութիւնը ոչ միայն նոյն տեղւոյն հասարակածէն ունեցած դրիցմէ կը կախուի, այլ նաև ծովուն երեսէն ունեցած բարձրութենէն ալ կը կախուի : ()է որ լեռան մը ստորոտն ու զագաթին վրայ ջերմաչափին ընթացքը դիտելու ըլլանք՝ կը տեսնենք որ միջին չափը այնչափ վար կ'իջնէ որչափ որ լեռը բարձր է . օդաչու ճանապարհորդներն ալ նոյն բանը դիտեր են : Ընդհանրապէս կը կարծուի որ բարեխառնութիւնը մէկ աստիճան կը պակսի 18Յ մեղր բարձրութեամբ . բայց այս թիւս կը փոփոխի՝ լայնութիւնը, եղանակը, օրուան ժամը՝ փոփոխելով . վասն զի բարեխառնութեան ազդումը՝ ամառը աւելի շատ է քան թէ ձմեռը . կէսօրուրնէ ետև աւելի զգալի է քան թէ առաւօտը . դարձեալ երկրնքին պարզութենէն, անձրևէն, կարկուտէն, և ուրիշ ջրեղէն օդերևոյթներէն ալ կը կախուի :

1 Տես երես 78 և 141 :